ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

_____N _____
Ձեր N _____

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՏԻԿԻՆ ՍՈՖԻԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հովսեփյան

Ի կատարումն Վարչապետի 24.03.2021թ. թիվ 02/05.7/8864-2021 հանձնարարականի՝ Ձեր 18.03.2021 թվականի հարցման կապակցությամբ հայտնում եմ.

1. Առողջապահության նախարարության նախկին «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ում առկա սեքվենատորն օգտագործվում է «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ում, որի տեխնիկական բնութագիրն է՝

մոդել՝ Applied Biosystems 3500 Genetic Analyzer, 8 կապիլյառանոց սեքվենավորման սարք, որն աշխատում է Սենջերի սեքվենավորման մեթոդով: Սարքը նախատեսված է ԴՆԹ հաջորդականության մեջ գուանինի, ցիտոզինի, ադենինի և թիմինի հաջորդականություններն որոշելու համար: Սարքը կարող է կարդալ մինչև 1000 նուկլեոտիդային հաջորդականություն: Կիրառվում է գենոտիպավորման, մուտացիաների հայտնաբերման և գեների էքսպրեսիայի չափման համար:

2. Առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 15.03.2021թ. թիվ 15/1-114 գրությամբ ցանկով ներկայացված ապրանքատեսակները ձեռք են բերվել «Մեդիսար» ՍՊԸ-ից որպես մեկ հավաքածու՝ 295.867.260,69 ՀՀ դրամ արժեքով: Առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից գնված սարքի տեխնիկական բնութագիր առկա չէ՝ այն չի կազմվել հրատապության պատճառով, քանի որ պայմանագրում հստակ նշված են այն բոլոր անհրաժեշտ չափորոշիչները, որոնք իդենտիֆիկացնում են անհրաժեշտ ապրանքատեսակները: Պայմանագրում առկա բոլոր ապրանքատեսակները հանդիսանում են հավաքական

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
Հեռ.՝ (+ 374 60) 80 80 03 էլ. փոստ՝ minister@moh.am

համալիր, ուստի Առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ը չի կարող տրամադրել յուրաքանչյուր ապրանքատեսակի գինն առանձին, քանի որ չի տիրապետում տվյալ տեղեկատվությանը: Տեխնիկական բնութագրի և յուրաքանչյուր տեղեկատվության վերաբերյալ կարող եք դիմել մատակարար հանդիսացող կազմակերպությանը՝ «Մեդիսար» ՍՊԸ-ին:

3. Զոհվածների գենետիկական նույնականացման գործընթացն արագացնելու նպատակով ձեռք է բերվել ԴՆԹ ավտոմատ անջատման սարք AutoMate Exspress DNA Extraction System, Proflex ամպիլֆիկատոր և վերը նշված սեքվենատորը, որը հնարավորություն է տալիս միաժամանակ և ներբեռնել նմուշները վերլուծման համար, և վերլուծել նախորդ նմուշները: Նախկին սեքվենատորը զուրկ է այդ հնարավորություններից:

4. 2020 թվականի մարտի մեկից մինչև 2021 թվականի հունվար ամիսը չի իրականացվել հետազոտություններ (պատճառը՝ COVID-19 համաճարակային իրավիճակ) թեստ-հավաքածուների բացակայության պատճառով: 2021թ. փետրվարից մինչ օրս իրականացվում են հետազոտություններ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի («ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի իրավահաջորդ) և ՌԴ դաշնային ծառայության՝ «Ռոսպոտրեբնադզորի» կողմից իրականացվող համատեղ գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում (թեստերը մատակարարվել է «Ռոսպոտրեբնադզորի» կողմից): Հետազոտությունները գտնվում են ընթացքի մեջ՝ համաձայն գիտահետազոտական ծրագրերի ժամանակացույցի:

5. Առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ում մինչև երկրորդ սարքի ձեռք բերումը, կատարվում էր շուրջ 12 ոսկրային հյուսվածքից անջատված ԴՆԹ-ների վերլուծություն, որի համար հետազոտվում էր մինչև 30-35 փորձանմուշ: Երկրորդ սարքի ձեռք բերումից հետո կատարվում է մինչև 30 նույնականացում, որի համար հետազոտվում են առնվազն 60-ից 70 նմուշ: Պետք է նշել, որ այս ընթացքում կատարվել են նաև զինվորների հարազատներից վերցված արյան փորձանմուշների դատագենետիկական հետազոտություններ և նույնականացումներ այս սարքի օգնությամբ:

6-7. Առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական

կենտրոն» ՊՈԱԿ-ի ABI Prism 3500 վերլուծիչի արտադրողականությունը 24 ժամյա ռեժիմի աշխատանքային պայմաններում կազմում է՝ օրական 2,2 ցիկլ, սարքը ունի հնարավորություն ներբեռնելու միաժամանակ 90 փորձանմուշ, սակայն աշխատանքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր հետազոտվող փորձանմուշից ներբեռնվում է երկուական՝ ճշգրիտ ԴՆԹ ստանալու համար, բացի այդ ներբեռնվում են նաև համապատասխան ազդանյութերը, որոնց միջոցով տեղի է ունենում սեքվենավորման պրոցեսը, ինչպես նաև կիրառվում են ստուգիչներ, որոնք ներքին ստուգման համար են, աշխատանքների ճիշտ և սխալ արդյունքները հաստատելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

X _____

Կատարող՝ Նարինե Մարգարյան
Հիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժին
Հեռ.՝ 060 80 80 03 /1206